ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2026թ. ԱՊՐԻԼԻ 27-ԻՑ 29-Ը ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Ասատուր Վարդանյան, ՀՀ ՏԿԵ նախարարի տեղակալ

2. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ

Թուրքիայի Հանրապետություն (ք. Ստամբուլ), 2026թ. ապրիլի 27-29:

3. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԵՐԸ

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (OECD):

4. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Գործուղման հիմնական նպատակն էր 2026թ. ապրիլի 28-29-ը Ստամբուլում Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից կազմակերպված Կենսական նշանակության հանքանյութերի հարցերով համաժողովին (Critical Minerals Forum) մասնակցություն ունենալը:

5. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ՝

Համաժողովի շրջանակում քննարկումների հիմնական ուղղություններն են եղել կրիտիկական հանքանյութերի ներուժի բացահայտումը, ոլորտում առկա մարտահրավերների վերլուծությունը, ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման կարևորությունը, մատակարարման արժեշղթայում ներդրումներ ներգրավելու

հնարավորությունների բացահայտումը, ոլորտի միջազգային փորձի և արդյունավետ կառավարման մոդելների ներկայացումը:

Քննարկումների կարևոր բաղադրիչ էր նաև հանքարդյունաբերության ոլորտում արդյունավետ գործընկերությունների ձևավորումը՝ ուղղված լավագույն փորձի փոխանակմանը, համագործակցության խորացմանը և նոր զարգացման հնարավորությունների ստեղծմանը:

6. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

2026թ. ապրիլի 28-ին մասնակցել եմ «Կենտրոնական Ասիա և Արևելյան գործընկերություն – Ներդրումների մոբիլիզացում՝ կրիտիկական հանքանյութերի մատակարարման շղթաների ռիսկերի կառավարմանը զուգընթաց» և «Հարավարևելյան Ասիա – Կրիտիկական մետաղների ռազմավարությունների զարգացման տարածաշրջանային մոտեցումներ՝ վստահելի, պատասխանատու, դիմակայուն» խորագրով նստաշրջաններին:

«Կենտրոնական Ասիա և Արևելյան գործընկերություն - Ներդրումների մոբիլիզացում՝ կրիտիկական հանքանյութերի մատակարարման շղթաների ռիսկերի կառավարմանը զուգընթաց» խորագրով նստաշրջանի շրջանակներում հանդես եմ եկել որպես խոսնակ՝ ներկայացնելով Հայաստանի Հանրապետության նախադրյալները՝ զարգացնելու ոչ միայն ավանդական հանքարդյունաբերությունը, այլ նաև կրիտիկական մետաղների արդյունահանումը: Անդրադարձել եմ նաև ոլորտի հիմնական մարտահրավերներին՝ կապված տվյալների ամբողջականության, տեխնոլոգիական հագեցվածության, ներդրումային միջավայրի զարգացման և հանքամետալուրգիական արժեքային շղթայի ամբողջականության ապահովման հետ:

Նստաշրջանի ընթացքում անդրադարձել եմ նաև կապակցվածության և ենթակառուցվածքների զարգացման կարևորությանը՝ մրցունակ և պատասխանատու հանքային արժեշղթաների առաջընթացի ապահովման նպատակով:

Այս համատեքստում ներկայացրել եմ նաև 2023թ. ընդունված Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության շրջանակում իրականացվող երկրաբանական տվյալների կառավարման արդիականացման և թվայնացման, ինչպես նաև միջազգային հաշվետվողականության ստանդարտների, ներառյալ՝ «Հանքային պաշարների հաշվետվությունների միջազգային ստանդարտների կոմիտեի» (CRIRSCO) կարևորության մասին:

2026թ. ապրիլի 29-ին մասնակցել եմ մի շարք թեմատիկ նիստերի՝ ուղղված համայնքների և տեղական ինքնակառավարման մարմինների կարևորությանը՝ կրիտիկական հանքանյութերի զարգացման ռազմավարության իրականացման հարցում, ոլորտի առևտրային, տնտեսական անվտանգության և մրցունակության հարցերին, ենթակառուցվածքների և կապակցվածության զարգացման միջոցով կրիտիկական մետաղների մատակարարման շղթաների ամրապնդման և մի շարք այլ ոլորտային հարցերին:

Բացի այդ, համաժողովի ընթացքում տեղի են ունեցել մի շարք աշխատանքային քննարկումներ ԱՃԹՆ գործադիր տնօրեն Մարկ Ռոբինսոնի, Ղրղզստանի Հանրապետության բնական պաշարների, էկոլոգիայի և տեխնիկական վերահսկողության նախարար Ակիլ Տոկտոբաևի, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության ներկայացուցիչների և այլ գործընկերների հետ:

7. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Գործուղման ընթացում փաստաթղթեր չեն ստորագրվել: Համաժողովի ընթացքում վերահաստատվեց փոխադարձ պատրաստակամությունը՝ ձևավորելու գործընկերական հարաբերություններ փորձի փոխանակման և համագործակցության ոլորտներում:

8. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ՝ ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Քննարկումների շրջանակում գործընկերներին հրավիրել եմ մասնակցելու 2026թ. հոկտեմբերին կայանալիք Հանքարդյունաբերության ֆորումին:

05.05.2026թ.